Հաստատում եմ՝
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ

Վ. Կարապետյան

ԱՈՒԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

25.10.2016թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 20.10.2016թ.-ի թիվ 103 կարգադրությունը, Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությունում իրականացվել է 2016թ.-ի 3-րդ եռամսյակի գնումների գործընթացի կատարողականի աուդիտ, ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Ն.Կարապետյանի՝ աշխատանքային խմբի ղեկավար, գլխավոր մասնագետներ՝ Հ.Ավետիսյանի և Խ.Խաչատրյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեցին մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Շ.Վարդանյանը, հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն.Թարվերդյանը, քաղաքաշինության վարչության պետ Ա.Հովսեփյանը, քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ Խ.Ասլանյանը, քարտուղարության վարչատնտեսական բաժնի պետ Գ.Ղազարյանը /պատասխանատու ստորաբաժանման ղեկավարներ/:

Աուդիտի հիմնական ուղղությունները.

ա/ **Գնումների կատարողականի աուդիտ:** Գնումների համապատասխանությունը <<Գնումների մասին>> ՀՀ օրենսդրության պահանջներին.

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքները կատարեցին որակավորված ներքին աուդիտորներ Ն.Կարապետյանը, Հ.Ավետիսյանը և Խ.Խաչատրյանը: Ունեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն, ֆինանսական վերահսկողության և ներքին աուդիտորի փորձ:

<u>Վարչությունում ռիսկի գնահատումը և ներքին վերահսկողությունը:</u>

Ըստ ձեռք բերած տվյալների ռիսկը և ներքին վերահսկողությունը գնահատելու համար հիմք ենք ընդունել □ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ□ ստանդարտը:

Վերահսկողության ռիսկի նախնական գնահատումը թույլ է տալիս եզրահանգելու, որ գնումների գործընթացը վերապահումով իրականացվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենսդրության պահանջներին գնումների կատարողականի աուդիտ: Լրատվական միջոցների ծառայությունների ձեռք բերում /գնում/ **ՎՁՄ ԲԸԱՀ ԱՇՁԲ – 16/01 ծածկագիր:**

Գնահատող հանձնաժողովը մրցույթի հաղթող է ճանաչել <<Պրես-Ստենդ>> ՍՊԸ-ին, որին առաջարկվել է կնքել գնման պայմանագիր: Կնքվել է 165000 դրամի գնման պայմանագիր: Նախահաշվային գինը կազմում է 190000 դրամ /տնտեսվել է 25000 դրամ/: Առկա են գնման ժամանակացույցերը, վճարման ժամանակացույցերը, տուժանքի մասին համաձայնագրերը:

Ֆինանսական պարտավորությունների կատարման և գնման ժամանակացույցի համաձայն իրականացվում է գնման կատարումը և ֆինանսավորումը: Պայմանագրային պարտավորությունների, գնման ժամանակացույցի և ֆինանսական պարտավորությունների շեղումներ չկան: Կատարվել է 70900 դրամի գնում: Պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվել 31.12.2016թ.-ը ներառյալ:

Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում: Ընթացակարգի ծածկագիրը՝ ՎՁՄ ՇՀԱՇՁԲ-16/03: Գնումները կատարվել են 2 չափաբաժնով համապատասխանաբար 36048410 դրամ և 36050000 դրամ, ընդհանուր գումարով՝ 72098410 դրամ: Նախահաշվային գինը կազմում է 72100000 դրամ /տնտեսում 1590 դրամ/: Գնումների արդյունքում կնքվել են գնման պայմանագրեր Եղեգնաձորի ՃՇՇ ՓԲԸ-ի և Վայքի ՃՇՇ ՓԲԸ-ի հետ: Առկա են գնման ժամանակացույցերը, վճարման ժամանակացույցերը, տուժանքի մասին համաձայնագրերը:

Ֆինանսական պարտավորությունների կատարման և գնման ժամանակացույցի համաձայն իրականացվում է գնման կատարումը և ֆինանսավորումը: Պայմանագրային պարտավորությունների, գնման ժամանակացույցի և ֆինանսական պարտավորությունների շեղումներ չկան: 9 ամսվա ընթացքում՝ ըստ չափաբաժինների Եղեգնաձորի ՃՇՇ ՓԲԸ-ի կողմից իրականացվել է 31000.0 հազ.դրամի և Վայքի ՃՇՇ ՓԲԸ-ի կողմից՝ 32131.6 հազ.դրամի աշխատանքներ: Պայմանագրի գործողության ժամկետը 2016թ.-ի բյուջետային տարի:

Ապրանքների ձեռք բերում /գնում/:

Գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռք բերում/գնում/: Ծածկագիր՝ ՎՁՄՇՀԱՊՁԲ-15/3-16/7: Մրցույթի հաղթող է ճանաչվել նվազագույն գնի առաջարկ ներկայացրած <<Սմարթլայն>> ՍՊԸ-ն, որի հետ առաջարկվել է կնքել պայմանագիր: Պայմանագրային գինը կազմում է 808300 դրամ: Առկա են գնման, վճարման ժամանակացույցերը, տեխնիկական բնութագրերը՝ հաստատված մատակարարի և պատվիրատուի կողմից, տուժանքի մասին համաձայնությունը: Նախահաշվային գնից շեղումներ չկան:

Ֆինանսական պարտավորությունների կատարման և գնման ժամանակացույցի համաձայն իրականացվում է գնման կատարումը և ֆինանսավորումը: Պայմանագրային պարտավորությունների, գնման ժամանակացույցի և ֆինանսական պարտավորությունների շեղումներ չկան: Իրականացվել է 478680 դրամի գնում: Պայմանագրի գործողության ժամկետը 2016թ.-ի բյուջետային տարի:

Համակարգչային պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի գնում:

Ծածկագիր՝ ՎՁՄՇՀԱՊՁԲ-15/8-16/05: Գնահատող հանձնաժողովի կողմից մրցույթի հաղթող են ճանաչվել <<Կոմպասս>> ՍՊԸ-ն և <<Արնար>> ՍՊԸ-ն ըստ նվազագույն գնային առաջարկի՝ համապատասխան չափաբաժիններով, որոնց առաջարկվել է կնքել գնման պայմանագիր: Տուժանքի

սահմն համաձայնության առկայության պայմաններում կնքվել է համապատասխանաբար 61200 դրամի և 51000 դրամի գնման պայմանագիր: Տնտեսվել է 130800 դրամ: Ֆինանսական պարտավորությունների կատարման և գնման ժամանակացույցի համաձայն իրականացվում է գնման կատարումը և ֆինանսավորումը: Պայմանագրային պարտավորությունների, գնման ժամանակացույցի և ֆինանսական պարտավորությունների շեղումներ չկան: <<Կոմպասս>> ՍՊԸ-ից կատարվել է 20400 դրամի գնում:
<<Արնար>> ՍՊԸ-ից կատարվել է 15300 դրամի գնում:
Պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվել 25.12.2016թ.-ը ներառյալ :

Ինտերնետային կապի ծառայությունների ձեռք բերում /գնում/:

Ծածկագիր ՎՁՄԲԲԱՀԾՁԲ-16/02: <<ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ>> ՓԲԸ-ն ճանաչվել է մրցույթի հաղթող, որին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: 16.12.2015թ.-ին կնքված գնման պայմանագրի հիման վրա կնքվել է համաձայնագիր <<ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ>> ՓԲԸ-ի հետ 408000 դրամի չափով: Նախահաշվային գինը կազմում է 410000 դրամ /տնտեսում՝ 2000 դրամ/: Առկա են գնման, վճարման ժամանակացույցերը, տեխնիկական բնութագրերը հաստատված՝ մատակարարի և պատվիրատուի կողմից, տուժանքի մասին համաձայնությունը:

Ֆինանսական պարտավորությունների կատարման և գնման ժամանակացույցի համաձայն իրականացվում է գնման կատարումը և ֆինանսավորումը: Պայմանագրային պարտավորությունների, գնման ժամանակացույցի և ֆինանսական պարտավորությունների շեղումներ չկան: Իրականացվել է 244800 դրամի գնում: Պայմանագրի գործողության ժամկետը 2016թ.-ի բյուջետային տարի:

Տնտեսական, սանիիգենիկ և լվացման միջոցների ձեռք բերում/գնում/: **Ծածկագիր՝ ՎՁՄԲԲԱՀԱՊՁԲ 16/3:** Մրցույթում հաղթող է ճանաչվել ,,Եղեգնաձորի սպիտակ տուն'' ԱԿ-ն, որին առաջարկվել է կնքել պայմանագիր: Պայմանագրային գինը կազմում 610650 դրամ: Նախահաշվային գինը կազմում է 624100 դրամ: Նշված գնմամբ տնտեսվել է 13450 դրամ:
Առկա են գնման, վճարման ժամանակացույցերը, տեխնիկական բնութագրերը հաստատված մատակարարի և պատվիրատուի կողմից, տուժանքի մասին համաձայնությունը:

Ֆինանսական պարտավորությունների կատարման և գնման ժամանակացույցի համաձայն իրականացվում է գնման կատարումը և ֆինանսավորումը: Պայմանագրային պարտավորությունների, գնման ժամանակացույցի և ֆինանսական պարտավորությունների շեղումներ չկան: Ըստ գնման և վճարման ժամանակացույցի իրականացվել է 365546 դրամ ընդհանուր գումարով գնում: Պայմանագրի գործողության ժամկետը 2016թ.-ի բյուջետային տարի;

Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռք բերում/գնում/:

Ծածկագիր ՎՁՄԲԲԱՀԾՁԲ-01/16: ,,ԱՌՆԱՐ'' ՍՊԸ-ի հետ կնքվել է գնման պայմանագիր: Պայմանագրային գինը կազմում է 280900 դրամ: Նախատեսվել է 281500 դրամ /տնտեսում 600 դրամ/: Առկա են գնման, վճարման ժամանակացույցերը, տեխնիկական բնութագրերը հաստատված մատակարարի և պատվիրատուի կողմից, տուժանքի մասին համաձայնությունը:

Ֆինանսական պարտավորությունների կատարման և գնման ժամանակացույցի համաձայն իրականացվում է գնման կատարումը և ֆինանսավորումը: Պայմանագրային պարտավորությունների,

գնման ժամանակացույցի և ֆինանսական պարտավորությունների շեղումներ չկան: Իրականացվել է 108000 դրամի գնում: Պայմանագրի գործողության ժամկետը 2016թ.-ի բյուջետային տարի:

Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում: Ծածկագիր՝ ՎՁՄՇՀԾՁԲ-15/3-05/16: Մրցույթի հաղթող է ճանաչել <<Վիվեկա>> ՍՊԸ-ին, որին առաջարկվել է կնքել գնման պայմանագիր: Տուժանքի մասին համաձայնության առկայության պայմաններում կնքվել է 1133500 դրամի գնման պայմանագիր: Նախահաշվային գինը կազմում է 1512000 դրամ: Տնտեսվել է 378500 դրամ:

Ֆինանսական պարտավորությունների կատարման և գնման ժամանակացույցի համաձայն իրականացվում է գնման կատարումը և ֆինանսավորումը: Պայմանագրային պարտավորությունների, գնման ժամանակացույցի և ֆինանսական պարտավորությունների շեղումներ չկան: Ըստ գնման և վճարման ժամանակացույցի իրականացվել է 680220 դրամի ընդհանուր գումարով գնում: Պայմանագրի գործողության ժամկետը 2016թ.-ի բյուջետային տարի:

Բենզինի ձեռք բերում/գնում/: Ծածկագիր՝ ՎՁՄՇՀԱՊՁԲ-15/1-16/02: Կնքվել է գնման պայմանագիր <<Սիփի էս Օիլ Քորփորեյշեն>> ՍՊԸ-ի հետ՝ 5501760 դրամի չափով, մեկ լիտրը՝ 330 դրամով: Նախահաշվային գինը կազմում է 7169200 դրամ: Գնման արդյունքում տնտեսվել է 1667440 դրամ: Առկա են գնման, վճարման ժամանակացույցերը, տեխնիկական բնութագրերը՝ հաստատված մատակարարի և պատվիրատուի կողմից, տուժանքի մասին համաձայնությունը:

Ֆինանսական պարտավորությունների կատարման և գնման ժամանակացույցի համաձայն իրականացվում է գնման կատարումը և ֆինանսավորումը: Պայմանագրային պարտավորությունների, գնման ժամանակացույցի և ֆինանսական պարտավորությունների շեղումներ չկան: Ըստ գնման և վճարման ժամանակացույցի գնվել է 10000լ. բենզին գումարով 3300.0 հազ. դրամ ընդհանուր գումարով: Պայմանագրի գործողության ժամկետը 2016թ.-ի բյուջետային տարի:

Տրանսպորտային նյութերի ձեռք բերում/գնում/: Ծածկագիր՝ ՎՁՄԲԸԱՀԾՁԲ-16/06: Գնման պայմանագիր է կնքվել <<Վիվեկա>> ՍՊԸ-ի հետ 780750 դրամ գումարով: Առկա են գնման, վճարման ժամանակացույցերը, տեխնիկական բնութագրերը՝ հաստատված մատակարարի և պատվիրատուի կողմից, տուժանքի մասին համաձայնությունը: Նախահաշվային գինը կազմում է 782800 դրամ /տնտեսում 2050 դրամ/:

Ֆինանսական պարտավորությունների կատարման և գնման ժամանակացույցի համաձայն իրականացվում է գնման կատարումը և ֆինանսավորումը: Պայմանագրային պարտավորությունների, գնման ժամանակացույցի և ֆինանսական պարտավորությունների շեղումներ չկան: Կատարվել է 468450 դրամի գնում: Պայմանագրի գործողության ժամկետը 2016թ.-ի բյուջետային տարի:

Ջերմուկ քաղաքի Արփայի կիրճի վերականգնման և հարակից տարածքների բարեկարգման աշխատանքների գնում: Ծածկագիր ՎՁՄ ԲԸԱՀ ԱՇՁԲ – 01/5:

Հաղթող է ճանաչվել <<Նոր Էներջի>> ՍՊԸ-ն: Միակողմանի հաստատված տուժանքի մասին համաձայնության պայմաններում կնքվել է գնման պայմանագիր 149160000 դրամի չափով: Պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվել 25.12.2015թ.-ը ներառյալ: Տնտեսվել է **3041800 դրամ:**

Առկա են գնման և վճարման ժամանակացույցերը: Առ 23.12.2015թ.-ի դրությամբ կատարվել է 20829685 դրամի աշխատանքներ, համաձայն կատարողական ակտերի: Համաձայն ՀՀ կառավարության 24.12.2015թ.-ի <<Գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին>> թիվ 1548–Ա որոշման, պայմանագրում նախատեսված կատարման աշխատանքների վերջնաժամկետը սահմանել մինչև 2016թ.-ի օգոստոսի 1-ը ըստ գնման գրաֆիկի: 2016թ.-ի սեպտեմբեր ամսվա դրությամբ կատարվել է 65009265 դրամի աշխատանքներ: Ընդամենը՝ 85838662 դրամ: Կապալառու կազմակերպության կողմից պայմանագրային պարտավորությունները սահմանված ժամկետում չեն կատարվել: Խախտվել է գնման ժամանակացույցը:Անհրաժեշտ ենք համարում համապատասխան միջոցներ ձեռնարկել և ապահովել պայմանագրի կատարումը ամբողջ ծավալով:

Ներքին աուդիտի բաժնի
աշխատանքային խմբի ղեկավար՝ Ն. Կարապետյան

Ներքին աուդիտորներ՝ Հ. Ավետիսյան
Խ. Խաչատրյան

Ֆին. և սոցիալ-տնտ. զարգացման վարչության պետ՝ Շ. Վարդանյան

Հաշվապահական հաշվ.բաժնի պետ՝ Ն. Թարվերդյան

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարներ՝ Գ. Ղազարյան
Ա. Հովսեփյան
Խ. Ասլանյան